ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թվականի N 900-Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածի 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Թալին, գյուղ Դաշտադեմ 5 ջրավազան հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07042026-02-0061) 0.07982 հա մակերեսով հողամասն ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Թույլատրել կոմիտեին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Թալին, գյուղ Դաշտադեմ 5 ջրավազան հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07042026-02-0061), 02-035-0491-0002 կադաստրային ծածկագրով, 0.07982 հա մակերեսով և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Թալին, գյուղ Դաշտադեմ 6 հողամաս հասցեում գտնվող (անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 13032026-02-0050), 02-035-0130-0005 կադաստրային ծածկագրով, 1.746 հա մակերեսով Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի միավորումը՝ մեկ միասնական անշարժ գույքի ձևավորմամբ:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքերի միավորման, նոր միասնական անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և անհրաժեշտ այլ իրավական գործողությունների իրականացումը՝ դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնելով կոմիտեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ